ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻՈՒ ՃԱՌԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Թարգելի՛ բարեկամներ, մեր Միության բոլոր ծայրերից խաղաղության օգտին միատեղ աշխատելու համար հավաքված խաղաղության պաշտպաններ՛ և մարտնչողներ՛.

Ռուսական Ուղղափառ եկեղեցին, տոգորված ամբողջ աշխարհում խաղաղությունը պաշտպանելու և ամրապնդելու գործի օժանդակման անկեղծ ցանկությամբ, ինձ հետ միասին, հանձինս Ձեր ողջունում է խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերանսը, օրհնում է նրա աշխատանքները և վճռականությունը՝ մինչև հաղթանակ պայքարելու խաղաղության համար:

Հիշենք Քրիստոսի խոսքը՝ «ԵՐԱՆԻ՝ ԽԱՂԱՂԱՐԱՐԱՑ...»: Մեր ժողովի ներկա օրերին, միլիոնավոր մարդիկ մեր ժողովրդից, և կարելի է ասել հազարյան աշխարհի ժողովուրդներից, իրենց մտավոր հայացքն են ուղղել դեպի Մոսկվա, մեր աշխատանքին, մեզնից սպասելով նոր և հզոր խոսք՝ ի պաշտպանություն խաղաղության և ի դատապարտություն մարդկության թշնամիների վայրագ և մոլեգին ոտնձգությունների, այն թշնամիների, որոնք երազում են ժողովուրդների, և հատկապես մեր ժողովրդի խաղաղությունը խանգարելու, այն ժամանակ, երբ նրա կյանքը լուսավորված է խաղաղ, ամենապարփակ և ստեղծագործող աշխատանքի լույսով:

Մեր եկեղեցին մեր ամբողջ ժողովրդի հետ միասին, հաստատորեն և հետևողաբար պայքարում է խաղաղության համար և պաշտպանում է խաղաղության գործը. նա ամեն օր աղոթում է «ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ», և դրա հետ միասին չի դադարում կոչ անելու բոլոր քրիստոնյաներին, առանց դավանանքի խտրության, կատարելու իրենց քրիստոնեական պարտքը՝ խաղաղությունը պաշտպանելու: Նա անդադար քարոզում է, որ խաղաղության համար պայքարելուց հրաժարվելը հանցանք կլիներ հանդեպ Աստուծո և խղճի, հանդեպ մեր ժողովրդի և հանդեպ ռուսական պատմության, որ այդ շարժումը ունի միայն մեկ, ազնիվ նպատակ՝ խաղաղությունը, և որ բոլոր այլ պնդումները զրպարտություն են, հարուցված նրանց կողմից, որոնց մուր մտա-

դրությունները պատրաստ են մթագնելու մարդկության խաղաղ կյանքը նոր և նախորդ պատերազմներից ավելի մահաբեր պատերազմով:

1948 թվին, Ռուսական եկեղեցու առաջարկությամբ, խաղաղության համար պայքարելու կոչով, համայն աշխարհի քրիստոնյաներին դիմեց Ինքնագլուխ Ուղղափառ Եկեղեցիների Պետերի և ներկայացուցիչների Մոսկվայի խորհրդակցությունը:

«Չփակենք մեր աչքերը ջայլամի նման վերահաս մարդկային նոր ատելության արտահայտության դեմ, չխցենք մեր ականջները նոր պատերազմի կատաղի ոռոտի դեմ»,— ասված էր այդ Դիմումի մեջ.— «բայց, ...միացած հանուն խաղաղության Թագավորի՝ Տյառն Քրիստոսի, դառնանք զրահ խաղաղությունը խախտելուն ուղղված բոլոր ոտնձգությունների և գործողությունների դեմ, և մեր ավետարանական համախոհությամբ և մեր ամուր ու անսասան բարեպաշտությամբ անկարելի դարձնենք ամեն տեսակի միտում, և արյունից, արցունքից, տառապանքից ու գերեզմաններից դեռ չմաքրված երկրի վրա նոր պատերազմի հրդեհի յուրաքանչյուր պլան...»:

Մեր Եկեղեցու ձայնը հնչեց Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային առաջին կոնգրեսում՝ Փարիզում և Խաղաղության կողմնակիցների Համամիութենական առաջին կոնֆերանսին՝ 1949 թվին: Խաղաղության բարեկամների համակրանքն առաջացրեց մեր Թուղթը, ուղղված մեր հոտին, նաև բոլոր Ուղղափառ Եկեղեցիների Առաջնորդներին, խաղաղության համար պայքարելու կոչով: Ոչ պակաս նշանակություն ունեցավ Ռուսական Ուղղափառ Եկեղեցու մասնակցությունը ատոմային զենքը և ագրեսիան Կորեայում դատապարտելու գործում:

Մեծ արձագանք ունեցավ և Ռուսական, Վրացական ու Հայկական Եկեղեցիների Առաջնորդների Դիմումը քրիստոնյաներին՝ 1950 թվին:

Խաղաղության համար պայքարի կոչ անելով, նրանք այն ժամանակ ասացին.— «Խաղաղության թշնամիներն ամեն հնարք գործ են դնում քրիստոնեական ճշմարտությանը դիմադրելու միջոցառումների մեջ, նրան սպառնալով ավերածության և մահվան գերիզոր ուժերով: Ուստի, մենք, քրիստոնեական եկեղեցիների երեք Պատրիարքներս, բարեպատեհ համարեցինք ուժեղացնելու խաղաղության կողմնակիցների շարժման օժանդակությունը, այդ մասին նաև կոչ անելով համայն քրիստոնյա աշխարհին, որը չի կարող և չպետք է ոչնչացման խելագար քաղաքականության հենարան դառնա... Պատերազմի չարիքի դեմ զինվելը յուրաքանչյուր քրիստոնեի պարտականությունն է, որովհետև քրիստոնեությունը մահվան կրոն չէ, այլ կյանքի և փրկության, որին ձգտում են բոլոր ժողովուրդները: Նրանք, մի միություն կազմած, պայքարի մտան խաղաղության թշնամիների դեմ, իրենց շարքերում ունենալով միլիոնավոր քրիստոնյաներ: Անհրաժեշտ է շարունակել և ուժեղացնել այդ պայքարը, որպեսզի բոլոր քրիստոնյաները, առանց դավանանքի խտրության, միացնեն իրենց ջանքերը այդ սուրբ գործում...»:

«Ժամանակակից մարդկության կարիքների նկատմամբ քրիստոնեական գործի կիրառումը կայանում է՝ ամենից առաջ՝ նրանում, որ գործառնորեն օժանդակություն ցույց տրվի խաղաղության մարտիկների ազնիվ որոշմանը, ատոմային զենքն արգելելու և պատերազմի հանցավոր ճանաչելու այն կառավարությունը, որն առաջինը կգործադրի այդ զենքը»:

Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երկրորդ կոնֆերանսը նույնպես լսեց մեր Եկեղեցու ձայնը, Նրա ներկայացուցչի՝ միտրոպոլիտ Նիկոլայի՝ ճառով: Նրա (միտրոպոլիտի) մասնակցությունը խաղաղության

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻՆ

կողմնակիցների Համաշխարհային երկրորդ կոնգրեսին և խաղաղության Համաշխարհային խորհրդի աշխատանքներին հանդիսացավ իբրև մի նոր ավանդ խաղաղության գործում, մեր եկեղեցու կողմից:

Վերջապես, ընթացիկ տարվա հուլիսին, Անտիոքի, Վրաստանի և Ռումինիայի Ուղղափառ եկեղեցիների Պետերը և Բուլղարական եկեղեցու ներկայացուցիչը, որոնք մեզ մոտ էին եկել եկեղեցական տոնին, մեր՝ Ռուսական՝ եկեղեցու հետ միասին ընդունեցին նոր Դիմում համայն աշխարհի քրիստոնյաներին, որով վկայեցին, որ Քրիստոսի եկեղեցին երբեք չի խուսափում մարդկության ժամանակակից կարիքներից և ծառայում է նրան իր կյանքի և գործունեության փորձով, որ նա օգնում է մարդկանց խաղաղ կյանքը պաշտպանելու, երբ խելագարների ատելությունը սպառնում է դրան ավերածությամբ և կորստով:

Դամասկոս մեկնելուց առաջ, Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք Ալեքսանդր III-ը մամուլում հայտարարեց, որ մեր երկրում եղած ժամանակ, նա ակներև համոզվեց, «որ այստեղ մարդկանց ամբողջ կյանքը ներթափանցված է մի ցանկությամբ՝ խաղաղ աշխատելու»:

Պատրիարք Ալեքսանդրի այդ խոսքերին, որոնք ճշտիվ արտահայտում են ռուս մարդկանց տրամադրությունը, ես կարող եմ ավելացնել, որ Ռուսական եկեղեցին մասնակից է և ողջունում է մեր ժողովրդի հաջողությունները, նրա բոլոր արտահայտություններում, ուրախանում է դրանցով և օրհնում դրանք:

Խորը համոզված լինելով մեր ժողովրդի խաղաղասիրության նկատմամբ, Ալեքսանդր Պատրիարքը կոչ ստորագրեց խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության մասին, և ասաց, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիները պետք է մասնակից լինեն խաղաղության պայքարին, «որովհետև պատերազմը քրիստոնեական բարոյականության հիմունքի խախտումն է»:

Այն փաստից, ասաց Ալեքսանդր Պատրիարքը, որ վերջերս խաղաղության թշնամի ուժերն ամեն միջոցներով փորձում են «թուլացնել Անտիոքի Պատրիարքությունը» և խզել Անտիոքի Պատրիարքության և Ռուսական եկեղեցու միջև եղած վաղեմի սերը, հանուն Սովետական Միության թշնամական նպատակների, կարելի է եզրակացնել, թե այդ ուժերին որքան ներհակ է Անտիոքի եկեղեցու խաղաղասեր դիրքը: Սակայն «Անտիոքի եկեղեցին միշտ արժանի կլինի Ռուսական եկեղեցու և ռուս ժողովրդի սիրուն, որը երախտիք է հանդիսանում խաղաղության և ժողովուրդների միջև եղած բարեկամության»:

Ես օգտվում եմ ներկա առիթից, որպեսզի հավաստիացնեմ, որ Ռուսական եկեղեցին ըստ ամենայնի պաշտպանում է Անտիոքի գերերջանիկ Պատրիարքի հայտարարությունը և իր կողմից միշտ պատրաստ է Անտիոքի եկեղեցուն եղբայրական սեր և աջակցություն ցույց տալ:

Ռուսական եկեղեցին երջանիկ կլիներ, եթե մյուս Ուղղափառ եկեղեցիների Պետերն ևս պաշտպանեին Անտիոքի Պատրիարքի հայտարարությունը և միանային դրան:

Այս տարվա նոյեմբերի սկզբին Վիեննայում կայացավ Խաղաղության Համաշխարհային խորհրդի երկրորդ սեսիան:

Խաղաղության Համաշխարհային խորհուրդը վերստին կոչ արեց խաղաղ կյանքի համար մղվող արքազան պայքարը այսուհետև ուժեղացնելու, որպեսզի վերջնականապես պարտված լինի նոր սպանդի հանցավոր դավադիրների խմբակը:

Ռուսական եկեղեցին ամենայն եռանդով պաշտպանում է խաղաղության Համաշխարհային խորհրդի կոչերը, որոնք համապատասխանում են արդարության և բոլոր ժողովուրդների համագործակցության բարոյական պահանջին: Կարելի է վստահորեն պնդել, որ սպառազինության աստիճանական և միաժամանակ կրճատումը, ատոմային զենքի, ինչպես և մասսայական ոչնչացման այլ միջոցների բացարձակ արգելումը, գերմանական և ճապոնական հարցերի լուծումը համաձայն արդեն ընդունված միջազգային համաձայնությունների ոգու, պատերազմական գործողությունների դադարեցումը, որտեղ էլ որ տեղի են ունենում, և, առաջին հերթին, Կորեայում, նաև բոլոր ժողովուրդներին, առանց օտարերկրյա ենշման և միջամտության իրենց գործերը անկախորեն վարելու և որոշելու իրավունքի ապահովումը,— խաղաղության Համաշխարհային խորհրդի առաջարկած այս բոլոր միջոցառումները, տվյալ պայմաններում, կազմում են դեպի խաղաղությունը տանող միակ ուղին:

Մեծ պետությունները կարող են այս ուղին բռնել միայն այն ժամանակ, երբ նրանք իրար մեջ խաղաղության Պակտ կնքեն: Համարյա վեց հարյուր միլիոն մարդիկ, որոնք իրենց ստորագրություններն են դրել հինգ Մեծ Պետությունների միջև խաղաղության Պակտ կնքելու Դիմումի տակ, պահանջում են այդ Պակտի կնքումը, որովհետև խաղաղության Պակտը միակ հնարավորությունն է ներկայացնում Մեծ Պետությունների բարի ցանկությունները ցուցաբերելու, մանավորապես նրանց, որոնք պատրաստվում են՝ իբր թե՝ «պաշտպանել»ու քրիստոնեական քաղաքակրթությունը երևակայական ագրեսորից:

Մեր եկեղեցին, որը, համաձայն Ստալինյան Կոնստիտուցիայի, որի 15-րդ տարեդարձն է լրանում մի քանի օրից հետո, անսահմանափակ ազատություն է վայելում իր հերքին կյանքի և գործունեության ասպարեզում, իր պարտականությունն է համարում խաղաղության ամրապնդման օգնելու, հավատացյալներին դաստիարակելով քաղաքացիական պարտականությանը հավատարիմ մնալու ոգով և հոգուտ մեծավորների և Հայրենիքի կատարված աշխատանքը համարում է հավիտենական փրկություն: Եկեղեցին ուսուցում է, որ օրինյալ խաղաղության, անխախտ բարեկեցության և աշխատանքի համար իսկական հանգստության կարելի է հասնել ոչ այլ կերպ, քան ճշմարտության ուղիով, որ ժողովուրդների ճշմարտության գործերի հետ անտեսանելի, բայց գործուն միությամբ, կապված են Աստվածային Ճշմարտության գործերը, և որ, այդպիսով, Աստվածային Ճշմարտության հետ կապված է և ներկայիս խաղաղասեր ժողովուրդների խաղաղության և ճշմարտության մեջ ապրելու ձգտումը:

Մենք երջանիկ ենք, որ մեր ժողովուրդը սույն ճշմարտությունն իրագործում է ամբողջ աշխարհի կողմից ճանաչված Առաջնորդի և խաղաղասեր ժողովուրդներին ոգեշնչող ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻ անհողդողդ ղեկավարությամբ, որն ասել է. «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՊԱՀՊԱՆՎԻ ԵՎ ԿԱՄՐԱՊՆԴՎԻ, ԵԹԵ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ ՎԵՐՑՆԵՆ ԻՐԵՆՑ ՁԵՌՔԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆԵՆ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ»:

Ներկա ժողովն իր կազմով և միաբան հաստատում է, որ մեր մեծ ժողովուրդը, համաձայն Առաջնորդի խոսքի, իրոք խաղաղության գործն իր ձեռքն է վերցրել, որպեսզի դրա համար պայքարի մինչև լրիվ հաղթանակ: Վերջինիս առհավատչյա է մեր ժողովրդի այն բարոյական հատկությունը, որն ստիպում է նրան հասարակական և միջազգային հարաբերությունների մեջ անկեղծությունը և ճշմարտությունը պաշտպանելու, և այն ամուր կապը, որը գոյու-

թյուն ունի նրա և Առաջնորդի, ճշմարտության մեծ պաշտպանի՝ ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻ միջև:

Այդ ճշմարտության արգասիքն է հանդիսանում խաղաղությունը, որի մասին վկայում է և Աստուծո խոսքը, ինն Մարգարեի բերանով. «ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԿԼԻՆԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՍԻՔԸ՝ ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՀԱՎԵՏ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ»:

Մենք անշեղորեն կողմնակից ենք խաղաղության, անխախտ վստահությամբ, որ այդ խաղաղությունը մենք կպաշտպանենք:

Եվ պայքարելով հանուն ամբողջ աշխարհի խաղաղության, որպես ճշմարիտ գործի համար, մենք համոզված և վստահ կրկնում ենք ստալինյան հրաշակավոր, իմաստուն խոսքերը — «ՄԵՐ ԳՈՐԾՆ ԱՐԴԱՐ Է — ՄԵՆՔ ԿՀԱՂԹԵՆՔ»: